

տկարացած ըլլալու էր, այս անծանօթ երկրին մէջ, իրեն բոլորովին օտար ու անսովոր պայմաններու ներքեւ գրեթէ այլ եւս անօգուտու անզօր էր հայ բանակին վրական ու մարդական քաջամարտիկ հեծելագունդերուն հանգէպ, որոնք՝ ինքնին արդէն լեռնորդեայք, լեռնագաւառի մը հանգամանաց վարժ էին, ու անոր բազմապիսի վտանգ-ներուն քաջածանօթ:

Արդ, այս բանակը Միհրդատ, ձիշդ հոռմէական ոճով, բաժնեց ու դասաւորեց զանազան գումարացակներու եւ գունդերու, որոնց իւրաքանչիւրին մարզիչ կարդեց իւր նախկին պրնտական զօրաբանակներուն վաստակաւոր զինուորները, պաշտօն տալով անոնց հայ զինուորները յար եւ նման հռոմէականին մարզել, ինչպէս որ նա եւս զիրենք մարզել տուած էր երբեմն հռոմայեցի աքսորականներու¹: Բաց աստի, ամբողջ ձմեռը շարունակաբար զէնքեր ու պատերազմական իրեղններ կազմել ու պատրաստել տուաւ մեծ քանակութեամբ, նմանապէս յարմար դատած վարերը մեծամեծ շաեմարաններ շինեց², ուր համբարել տուաւ մեծաբանակ պաշար ու ցորեննեղէն, որպէս զի զօրաց սնունդը բանակետղին մօտերը գտնուելով՝ անոնց պարենաւորման գործը զիւրանայ. ու հարկ չըլլայ զայն այդ լեռնավայրերու նեղ ու անկոխ արաշեաններու վրայով ու տաժանագոյն աշխատութեամբ՝ բանակին ետեւէն, ասոզին անդին փոխադրել: Այսպէս Հայք ծերունի Միհրդատի իմաստուն ու աշալուրջ վարչութեան ու առաջնորդութեան ներքեւ գիտցան այս անգամ իրենց պարապոյ ժամերն հիանալիօրէն օգտագործել, ու լաւ կազմակերպուիլ: Իրենց զինուորական պատրաստութիւնքը մեծ չափով արդէն աւարտած վերջացած էր, երբ Լուկուլսու վճռեց իւր ձմեռոցէն ելլելով նոր պատերազմին թատերավայրը Հայաստանի ներքնաշխարհը փոխազրել:

(Շարունակութիւն:)

Հ. Գ. ՔԱՐԱՆՉՈՂՅԱՆ



¹ Փլետոնի քով, FHG III, էջ 606 հայ զինուորներու ստացած այս հռոմէական մարզանքը սիստմամբ Տիգրանակերտի հակառամարտին առթիւ նշանակուած է:

² Plut. Luc. c. 31 և Appianus. Mithr. c. 87.

ՀՈԼԼԵՆԻ ԹԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Ժ.Զ. – Ժ.Թ. ԳԱՐԵԲՈՒՄ

(Շարունակութիւն:)

4.

Առաջին հայ տպագրութիւնները: Յովհ. Ընկիւրացի Մոլինոս եւ իր տպագրական գործունեութիւնը: Հառմի Հաւատոյ Տարածման ժողովի եւ Հայերէն Աստուածաշունչը: Առաջին հայ տպարանն Ամստերդամում: Մատթէոս Շարեցի, Վլլընց Աւետիս եւ Կարապետ վարդապետ՝ ապահանական գործիչներ: Ամստերդամում ապուած հայերէն գրքերը 1660—1666: Պիրումալի լատին կրօնաւորն Էջմիածնում: Ասկան վարդապետ Երեւանիցին: Աստուածաշունչի տպագրութիւնը: Ամստերդամի լատին նուիրակի յանձնարարականը: Ասկանի տպած գրքերն Ամստերդամում: Ասկանի հեռանալին եւ նոր ձեռնարկութիւնները: Յովհ. Վարդապետ Հոլով:

Տպագրութեան գիւտից (1455) հազիւ 57 տարի էր անցել երբ երեւաց նրա հայերէն օրինակը: Մեր ժողովրդի քաղաքական եւ տնտեսական հանգամանկները միշտ այնպէս են դասաւորուել, որ քաղաքակրթական ամէն մի նոր քոյլ, ամէն մի նոր ձեռնարկութիւն միշտ լիյս է տեսել եւ իրականացել է բուն հայրենիքի սահմաններից գուրս: Այսպէս է եղած նաև տպագրութեան համար: Հայ տպագրիը առաջին անգամ՝ յղացուած ու մարմնացած է այնտեղ, ուր միջոցներ ու յարմարութիւններ կային այդ նոր արհեստից օգտուելու եւ ուր նա ընդհանրապէս սկսել էր զարգանալ: Ինչպէս որ առաջին կարեւոր հայ գաղթականութիւնը եւրոպական հողի վրայ՝ հիմունած է Վենետիկում, այդպէս էլ իրերի բնական բերմամբ առաջին հայ տպագրի գիրքը իրականացած է այգտեղ, գօժերի այդ եղակի քաղաքում, ուր շարժուն տառերի գիւտից յառաջ արդէն գործածութեան մէջ էր փայտագլութիւնը, այն է տախտակի վրայ փորուած տպագիրն: Վենետիկից է, որ այս արհեստը անցած ու զարգացած է Գերմանիայում եւ Հոլլանդայում:

Առաջին հայ տպողը մի իտալացի է եղած, ինչպէս ենթադրվում է, ոմն Հան Andrea: Արուեստի տեսակետից գատելով՝ հայ տպագրութեան այս առաջին փորձերը աղքատ են եղած

եւ չեն յառաջադիմած, թէեւ չեն էլ դադարած: Հայկական տպագրութիւնը՝ ընդմիջութեռով շարունակուած է վենետիկում զանազան մասնաւոր տպարաններում, մինչեւ որ Միթարեան Սիբաբանութիւնը 1789ին յաջողած է հիմնել իր սեփական տպարանը, եւ հասուցած այժմեան ճոխութեան:

Վենետիկում 1512—1513ին առաջին անգամ լոյս տեսնելուց յետոյ հայ տպագիրը հետզետէ երեւաց Կ. Պոլսում (1567), Լէմբէրգում (1616), Հռոմում (1623), Միլանում (1624), Փարիզում (1633), Կոր Զուղայում (1640) եւ Լիոնուայում (1643), բայց բոլորն ալ խեղճ եւ անձաշակ, մինչեւ Ամստերդամում տպարան հաստատուիլը: Հայկական տպագրութեան առաջին մաքոր եւ իսկապէս գեղարուեաւական արտադրութիւնը Ոսկանի տպած Աստուածաշունը է Ամստերդամում:

Հայերէն լեզուով Աստուածաշունը տպելու խնդիրը Ոսկանից առաջ զբաղեցրել է ուրիշներին էլ, բայց յաջողութիւն չեն ունեցել: Բոլորն էլ այդ նպատակով դիմել են նախ Հռոմ, ինչպէս եւ ինքն Ոսկան, որովհետեւ Հռոմի Ուրբանեան վարժարանի տպարանն ամէնից աւելի յարմարութիւններ էր ներկայացնում: Միեւնոյն ժամանակ Ս. Գրքի Հրատարակութեան համար Հռոմէական եկեղեցական իշխանութեան բարեհաջ հաւանութիւնը եթէ ոչ անհրաժեշտ, գեթմէծապէս կարեւոր էր համարուած:

Այս հարցը գեռեւս 1632ին Հռոմում արծարծել է Յովիաննէս Անկիւրացին, որին լատինական աղբիւրները կոչում են “Հայազգի Յովէ. Մոլինոս, Վենետիկիների թարգմանը Զմիւռնիայում”:

“Ես, նուաստահոգի Յովհանէսս անկիւրացիս, գրում է նա 1642ին Վենետիկում տպած Սալմոսարանի յիշատակարանում, տեսանէի դպակասութիւն գրեանց ազգիս Հայոց եւ վարանէի ի մտի թէ զինչ լինի Շնար բազմանալոց հին եւ նոր կտակարանաց. Քանդի պատճառ նուազութեան այս էր, զի բազում ծախիւք եւ գժուարութեամբ հազիւ. Կարէ ոք ստանալ Ա. (մէկ) գիրք կամ Բ. (երկու) եւ կամ երիս. Թողթէ պիտոյանայ բազում: Նա գիտէր, որ Հռոմում Հայերէն տպագրութիւնը գոյութիւն ունէր 1623ից սկսած: Նրան յայտնի էր նմանապէս, որ Ամստերդամ քաղաքը տպագրական արուեստի կենդրոնն էր, ուր եւ հայ վաճառականներ էին հաստատուած: Ուստի իր ձեռնարկը նա սկսեց նախ Հռոմից: Նա գրաւորապէս դիմեց Հաւատայ-

Տարածման ժողովին թախանձագին խնդրելով, որ իրեն իրաւունք տրուի Հռոմում Հայերէն լեզուով Ս. Գրքը տպելու: Կրա նամակը կարդինալ Ուբալդինի զեկուցանում է Ս. Ժողովին, բացատրելով իր կողմից, որ եթէ նրան այս արտօնութիւնը զլացուի, Մոլինոս մտադիր է դիմել Հոլլանդա: Կարգինաների խորհուրդը լուրջ քննութեան է առնում այս հարցն եւ որոշում է չմերժել՝ այլ յօյս տալ Մոլինոսին թէ նրա առաջարկութիւնը նկատի կ'առնուի, որպէս զի, ասուած է որոշմագրի մէջ “Հայերը այս նպատակի համար հոլլանդացի հերետիկուների հետ բանակցելուց ետ կենան:” Ֆողով՝ ի նկատի առնելով, որ “Նախիջեւանի արքեպիսկոպոս Եղբայր Աւգուստինոսին տուած տեղեկութեան համաձայն Նախիջեւանի գաւառում գտնվում է գոմինիներին կրօնաւորների ձեռքով կատարուած Հայերէն մի թարգմանութիւն Վոլգատայից ու, որոշում է գրել նրան, որ այդ թարգմանութիւնից մի օրինակ ուղարկէ Հռոմ: Այս որոշմագրի լուսանցքի վրայ գրուած է. “Հռոմում տպուելի Աստուածաշունչի մասին, որպէս զի չլինի թէ հոլլանդացի հերետիկուները տպեն¹”:

Յովէ. Անկիւրացին այս որոշման հիման վրայ 4 տարի մաց, Հռոմում անընդհատ պատրաստութիւն տեսնելով “բազում չարչարանօք, գրում է նա, զոր չէ Շնար ի գիր արկանել, զոր ծածկագէտ ստեղծաւողն իմ գիտէ: Եւ հանի զպողպատն եւ զկաղպարբն եւ զծաղիկբն եւ զծաղկագրերն բազում աշխատութեամբ”: Չնայելով այս չարչարանքին, նա չէ յաջողում տպագրել, որի մասին նա գրում է այսպէս.

“Ես Յովէաննէս Անկիւրացի, Գրանկն Ճո-

¹ Ա. Յ. Սատիներէն բարգիրը.

“Referente eodem Eminentissimo Domino cardinali Ubaldino literas Joannis Molini Armeni interpretis Venetorum in Smyrna, in quibus certis propositis conditionibus instabat ut Romae biblia Armena imprimarentur, ne Armeni, ut paulo ante tentarunt, illa apud Hollandos haereticos imprimarent. Sacra Congregatio censuit super huiusmodi negotio serius esse deliberandum. Interim tamen ut dictus Joannes Molinus serius eosdem Armenos a tractatione de huiusmodi re cum praefatis haereticis avertere possit, eidem per literas spem esse praebendam, quod dieta biblia Romae imprimarentur. Praeterea cum ex relatione fratris Augustini archiepiscopi Nascevanensis in provincia Nascevanensi reperiantur biblia vulgatae editionis in Armenum translata a fratribus Dominicanis, Sacra Congregatio censuit scribendum esse praefato archiepiscopo ut copiam Bibliorum mittat. (In margine) — “De bibliis Armenis Romae imprimendis, ne Hollandi haereticis ea imprimant.”

Acta Sacrae Congregationis de Propaganda Fide Vol. VIII (1632—1633), fol. 11.

վաննի Մուլինո կոչէ, եկի ի մեծն Հռովմ թվին Հայոց ԲՇՋ եւ կեցայ մինչեւ ՌՂ. վասն պայմաս առնելոյ վսուրբ աստուածաշունչն. բայց ոչ կարացի աւարտ առնել վասն բազում պատճառից. բայց ոյս ունիմ ի Վանատիկ կամ ի Կոստանդինոպոլիսի կատարել. զի ունիմ զամենայն գործիք, որ պիտոյ են վասն այդ բանիդ:

Այդպէս էլ անում է: Հռովմից Անկիւրացին գնում է Անետիկ, եւ 1642ին տպում է այնտեղ Սաղմասարանն եւ հետեւեալ տարին՝ “Յիսուս Որդին”:

Թէեւ Մոլինոս չէ յաջողում Աստուածաշունչը տպել Հռոմում, բայց նա այնքան վստահութիւն է գրաւել իրեւ լեզուագէտ, որ Ս. Ժողովը նրա քննութեանն է յանձնել լատիներէնից եւ իտալերէնից կատարուած զանազան հայերէն թարգմանութիւններ: Նա քննել է նաեւ հայերէն ևորհրդատետրի լատիներէն թարգմանութիւնն, որի յիշատակարանում գրել է. “Ես Յոհաննէս Մուլինի, թարգմանիչ Հայոց, զգիրքս զայս հայի եւ լատինի լեզուով գրեալ, տեսի եւ կարացի եւ զիայեմ վասն ճշմարտութեան զի ամենեւին հաւասարին միմիանց բարի եւ ստոյգ”:

Խակ հայերէն Աստուածաշունչն այնու ամենայնիւ տպվում է “Հերետիկոս Հոլլանդայում...”:

Առաջին հայ տպարանը Ամստերդամում հիմնած է 1660ին:

Այս պատիւը պատկանում է Մատթէոս Ծարեցուն, որ Էջմիածնից յատկապէս այդ նպատակի համար Եւրոպա էր ուղարկուած: Մատթէոս՝ Փիլիպոս կաթողիկոսի քով նօտարի պաշտօն էր կատարում եւ հմուտ էր նկարչութեան, մանաւանդ՝ “ծաղկելու” արուեստին: Փիլիպոսի մահից յետոյ նրա յաջորդի, Յակոբ կաթողիկոսի յանձնարարութեամբ Մատթէոս Ծարեցուն 1656ին մեկնում է այնտեղից եւ զմիւռնիայի Ճանապարհով գալիս է, ինչպէս գրում է ինք, “ի գեղազարդ քաղաքն եւ ի նաւահանգիստն ի Վենետիկ”:
Բայց այստեղ չէ կարողանում իր նպատակին համնել եւ դիմում է Հռովմ: Հռոմում նոյնպէս չէ յաջողում եւ նոյն խսկ թշնամիկան լիբրաթերմոնիքի է հանդիպում: Նա ոչ միայն իր վինտուած արուեստագէտներին չէ դասում այնտեղ, այլ ումանք “Քարեատեացք եւ հակառակասելք գրգռեցին զմեծամեծս ու զժողովս առ ի խափանել զայս գործ”՝ մինչեւ այն աստիճան, որ արգելեցին արհեստաւորներին “զայս արհեստ տալ ի ձեռս Հայոց”:
Դրանից միայն նա որոշում է գալ Ամստերդամ, ուր լիուլի յաջողութիւն է գտնում: Այս միջու

ցին Ամստերդամում կար մի ճարտար հոլլանդացի փորագրիւ եւ ձուլիչ, Քրիստոֆ ֆան Դիք (Christoffel van Dijck կամ նոր ձեւով Dyck) անունով, որ աշխատում էր տպարանապետ էլզէվիլսի քով: Ծարեցին 1658 նոյեմբեր 27ին պայման է կապում նրա հետ, որ ֆան Դիք ձուլէ հայերէն տառեր իր ցուցմունքի համաձայն, 170 հատ հայր (poingon) եւ 240 մայր (matrice) մեծ, միջակ եւ փոքր չափերով, հատը 1 ֆլորին 70 սէնտով: Բացի դրանից երբ գործը վերջանար, ֆան Դիք կին էլ ընծայ պիտի ստանար 10 ֆլորին¹: Հոլլանդացի պատմագիրները Մատթէոսին կոչում են Mattheo Acast, որովհետեւ հօրն անունը Աւագ էր²: Տառերը դեռ բոլորը չէին ձուլուած, այլ միայն 50—60 հատ, երբ Ծարեցին գործի է սկսում եւ 1660ին տպում է իր առաջին ու միակ գիրքը, Ծնորհալու “Յիսուս Որդին”:

Մատթէոս իր այս ձեռնարկութեան մէջ բնականաբար դժուարութիւնների է հանդիպում, բայց այդ այնքան չէ նեղացնում նրան որքան այն հակառակութիւնն, որ տեսել է տեղացի հայ վաճառականներից եւ նոյն խսկ քահանաներից, կամ ինչպէս նա գրում է, “ի սուտածեւ կարգաւորաց եւ յաշխարհականաց թէ ի Վնէտիկ եւ թէ աստ ի Մատթէոսի, որք փոխանակ օժանդակութեանն զոր պարտն էին՝ գիմարաննեալ հակառակէին մշտաբար”:
Մինչեւ խսկ, շարունակում է նա, երբ բարեկաշտ հոլլանդացիներից ումանք ուղինային նրան օգնել “զայն եւս յուսահատեցուցանէին եւ ապաշաւել տային բարեգործութեանն”:
Բարեբախտաբար բոլոր հայերն այդպէս չէին: Կային Մատթէոսին գնահատողներ եւս, որոնք քաջալերում եւ օգնում էին նրան: Սակայն այս մասնակի օգնութիւնն չէ ծածկել նրա ծախիքերն եւ նա տպարանի պատ-

¹ Պայմանագրի մէջ ասուած է՝ 34 struiver այն ժամանակի փողով, որ անում է 1 ֆլ. 70 ս. խսկ Փլաբինը կոչուած է Carolusgulden:

² Հոլլանդացի պատմագիրներն այսպէս են բացարում հայկական տպարանի հաստատութեամստերդամում:
“Հայոսսամականի պատրիարք Յակոբ Զ.՝ արքեպիստ եւ գիտութեանց սիրահար մի մարդ”՝ 1656ին Լոելով, որ Վենետիկի եւ Ֆուլիայի տպարանների տառերը մատուել, անգործածել են գարձել, իր սարկաւագ Մատթէոս Ծարեցուն Հայունդապատ ու զարկեց, որպէս զի պատեղ լաւագոյն տառեր պատրաստել տայց”:

Պատմաբան De Roever կարծում է թէ տպարանը հիմնած է 1658ին: Բայց ինչպէս ճիշտ նկատում է Dr. Berg, “իթէ տառերը ձուլուած են 1658 ին, դրանից չեն կարել եղանակներ թէ ուրիշն տպագրութիւնն էլ սկսել է 1658ին . . .” Իրք 1660ին է, որ առաջին հայ տպարանը սկսեց գործել Ամստերդամում՝ “Bibliothek Kleven”, Jährgang IX, Nr. 3, Maart 1924, Utrecht.

Ճառով պարտքի տակ ինկաւ եւ տեսաւ թէ անկարող էր թոյլ նիւթական միջոցներով շարունակել սկսած մեծ գործը, նա ինդրեց զլըջենց և ետիս վաճառականից (Ոսկան վարդապետի եղբայրը), որ “715 մառչիլ” փոխ տայ իրեն, որպէս զի այդ փողով 1200 օրինակ Յիսուս Ռոդի եւ 2000 օրինակ Սաղմոսարան հրատարակէ: Դրանց վաճառումից գոյանալիք շահը հաւասար պիտի կիսուէր նրանց մէջ: Աւետիս յանձ առաւ ընկերանալ, բայց պայման դրեց, որ ապարանը ընծայեն հջմիածնին եւ Ա. Սարգիս վանքին:

Մատթէոս ընդունեց եւ կտակ արաւ, որ իր պարագերը հատուցուելուց յետոյ տպարանը էջմածնի եւ Ա. Սարգսի վանքի սեպհականութիւն դառնայ: Որպէս զի այս պարտքի ինդիրը արգելք չանդիսանայ նուիրաբերութեան, մի ուրիշ վաճառական, երեւանցի Սահմատինեան Պօղոսի որդի Գրիգորը մասամբ վճարում է տպարանի պարտքը:

Աւետիս իր յիշատակարանում ասում է թէ Մատթէոս տառերի եւ տպագրական ծախքերի համար պարտք էր թողել “հազար մառչիլ”, մինչ տպարանին գոյքը՝ այդ գումարին կէսն իսկ չարժէին:

Մատթէոսին չէր վիճակուած տեսնել նոցախէկ իր այս միակ գրքի ամբողջացումը: Երբ Յիսուս Ռոդին շարուած էր 38 թերթ եւ տպագրութիւնն էլ հասած էր 28 թերթի, Մատթէոս, որ արդէն տկար էր երբ սկսել էր տպել, վախճանեցաւ 1661ին (Ո.Ճ. Յունուար 22): Նա կանխաւ պատրաստել էր այն յիշատակարանն, որ գրքի վերջը պիտի դրուէր եւ որի մէջ մանրամասն պատմում է այս գործի մէջ իր գլխից անցածը:

Ամստերդամի մէջ տպուած այս առաջին գերբը “իշխանութեան քաղաքին նորընձա փոինչիփային Վիլհալմ Օրանեայ”, թէպէտ եւ տառերի ձեւի կողմից բաւական վայելուչ, ըստ բովանդակութեան սխալներով լիքն էր: Նոյնը խոստովանում է եւ Մատթէոս իր յիշատակարանում եւ ինդրում է “ներել պակասութեան գրոցս, զի օրինակն մի էր եւ շարողք ֆրանկք ոչ են տեղեակք գրոց մերոց եւ լեզուաց. եւ ես միայն եւ տկար գոլով կու սրբագրէի հազիւ այսքան կարի ստէպոյ”:

Աւետիսի այս գործում ընկեր դառնալն այն օգուտն ունեցաւ, որ տպագրական ձեռնարկութիւնը չգագարեց Մատթէոսի մահից յետոյ: Աւետիս գրում է իր յիշատակարանում “... որ ժամ որ մեռաւ (Մատթէոս) ես, իբրեւ որբ տա-

րակուսեալ եւ պարապ մընացի, ես եւ սահմանք եւ գործն եւ մշակն. ամիս ժամանակ անցաւ սկսան նաւերն գնալ ի գէմ արեւելս ի քաղաքն Զըմբոնայ աթոռն սուրբ Պօղիկարպոսի, որ է յեօթանասնիցն. անձարութեանն մնացեալ ժող. տետրն տպագրեցի վախելով այսպէս սրբագրեցի. օրինակն ետի մի կողմ, տպայգրածն մի կողմ, յորժամ որ սղալ լինէր կու մեկնի այսպէս սրբագրեցի մընացալ ժող. տետրն. ապա ուսայ ըզպրբագրելն որ գուրին է. թվին Ռուժ մարտ ամսին իե. սուրբ Աստուածածինն միջնորդ ունելով”:

Աւետիս, որպէս զի կարենար շարունակել տպարանական գործը, պէտք ունէր արտաքին օգնութեան, թէ զրականն թէ դրամական: Այս նպատակով նա ընկեր առաւ Ամստերդամի հայոց հոգեւոր Հովիւ Անդրիանեցի կարապետ վարդապետին: իսկ գրամական օգնութիւն նա գտաւ Յ հայ վաճառականից, որոնք հարկ եղած գրամը փոխ տուին նրանց: Այս վաճառականներն էին՝ Ամսիացի Խուտապաշխի որդի Մինաս եւ Զուղայեցի Շահրիման ու Յովհան Միրզէնց:

Աւետիս եւ կարապետ իրենց տպած գրքերն ուղարկում էին Զմիւռնիա, այնտեղից էլ երկրի ներսերը, ծախուելու: 1662ին նրանք տպեցին ժամագիւղը 3000 օրինակ “գիւրագին եւ ձեռնհաս եւ ամենեցուն ստանալի... Զըր հաւատացեալ եղեւ ի կենարարին թուղյն ՌԱՊԻ յամեեանն Օգոստոսի ժն եւ Արամեան տոհմին թուականուեան ՌՃԺԱին, յամոյն մարդաց ի ... Յաշնարին Ֆուանկաց երկրին յօլանդայ, ի քաղաքն յԱմսդերտամ, յիշխանութեան տեղույոս Ալիէլէլմուս Փրինց Փալին. ի տպարանս որ կոչի Սուրբ Էջմիածնի եւ սիրելի վկային իւրոյ սրբայն Սարգսէ զօրավարին, որ կառուցաւ ի նոյն Մատթէոս սարկաւագէ եւ ի ժամու վախճանին նուիրեցաւ վերոգրեալ սրբարանացն: Գոյիւք եւ արգեամբը եւ հոգացողութեամբ Վլիճենց Աւետիսին երեւանեցւոյ, որ է վերակացու եւ թարգման տպարանիս եւ մատակարարող եւ առաջնորդ ամենայն գործակալաց արուեստարանիս ինչպէս ասուած է յիշատակարանում:

Աւետիս՝ վաճառական լինելով երբեմն ստիպուած էր հեռանալ քաղաքից իր գործերով. այն ժամանակ տպարանի գործը կաղում էր: Կարապետ վարդապապ. որ երգեցողութեան խաղեր էր փորել տուել Շաբական տպելու համար, թէեւ օգնում էր նրան, բայց տպարանը շատ անորոշ վիճակի մէջ էր գտնվում: Այս միջոցին էր, որ Էջմիածնի հարկ համարեց կարուկ կարգագրութիւն անել, իբրեւ տպարանի օրինական

տէրը: Այնտեղից ուղարկուեց մի նոր մարդ, այնպիսի մէկն, որ փոքր ի շատէ յարմարութիւն ունենայ այդ գործին, ամբողջապէս նուիրուի տպարանին եւ գործը հաստատուն հիմքի վրայ դնէ ու ընդարձակէ: Այս մարդը Ոսկան վարդապէտն էր, որ միանգամայն այն առաւելութիւնն ունէր, որ Աւետիսի եղայրն եւ կարապետի նախկին ուսուցիչը լինելով, ապահով էր, որ սրանց կողմից ամէն կերպ ձեռնտուութիւն պիտի գտնէր:

Բայց Ոսկանի Ամստերդամ գալուն եւ տպագրական գործին ձեռնամուխ լինելուն մի ուրիշ կարեւոր պատճառ եւս կար: Սակայն նաև՝ ովկ էր Ոսկան:

(Ծարուհակելի:)

ՍԱՐՈՒԻՆՆ



Հ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀԵՅԵՐԻՆ ԾԱԾԿԱՅԻ ԳԻՐԸ

ԱՊՈՒԱՆԻՑ ԳԻՐԸ

Ծածկագիր ընդհանուր անունով կը հասկընակ այն տեսակ տեսակ խորհրդաւոր գրութիւնները, որ հին գրիչները կը գործածեն երբեմն իրենց գրութեանց մէջ, գաղտնի մալու համար, երկու նպատակով: Կախ ապահովելու համար իրենց յիշատակը ապագայ կեղծարարներէ, որոնք ընչելով բուն գրչին անունը, իրենցը կը դնէին՝ գիւղը, գրչի յիշատակը եւ անոր սողորմիս որ իւրաքնելու համար: Ըստ այսմ այս կարգի ծածկագրերը շատ սակաւաթիւ են, կը գտնուին միայն յիշատակարաններու մէջ եւ ուրիշ բան չեն պարունակեր, եթէ ոչ գրչի անունը՝ համառօտ յիշատակութեամբ: Երկրորդ՝ որոշ չափով գաղտնի պահէլու համար բժշկական կամ քիմիական այնպիսի տեղեկութիւնները, որոնց չարաչար գործածութիւննը տգետներու ձեռքով՝ կը նար վեաւսակար լինել: Ըստ այսմ այս կարգի ծածկագրութիւններու կը պատահինք բժշկարաններու, քիմիական գրուածքներու եւ վեցհազարեակի մէջ: Երկուպարագային ալ ծածկագրողը վստահութիւն ենի գէպի այն գիտունը կամ ուսումնականը, որ կրն ո հասկնալ ծածկագրին իմաստը եւ իրեւնումնային մարդ՝ բարեխիղջ կերպով կը վե-

րաբերուի հիներու յիշատակին եւ այն խորհրդաւոր գաղտնիքներուն:

Ծածկագրերը երկու տեսակ են, առաջին՝ անոնք, որ ուղարկի հայերէն տառերն են՝ տարբեր արժեքով, այնպէս որ ամէն մարդ կրնայ կարգալ իր հայերէն, բայց ամենեւին իմաստ մը չի գտներ: Երկրորդ՝ անոնք, որ բոլորովին նոր այրութեն մը կը ներկայացնեն եւ անկարելի է կարգալ զանոնք՝ առանց այդ նոր տառերու արժեքը գիտնալու: Կայ եւ ծածկագրի երրորդ տեսակ մը, որ այս երկուքին միջին տեղը կը բռնէ:

Առաջին տեսակին կը պատկանին նորութեաւ, դուրութեաւ, բուրութեաւ, իւրութեաւ, եղբայրութեաւ:

Երկրորդ տեսակին կը պատկանին այլաձեւ այլուրենով ծածկագրերը:

Թորութիւն կը կոչեմ ծածկագրութեան այն տեսակը, որուն մէջ տառերը կը նշանակուին իրենց թուական արժեքի պարզ բազմապատիկներով. այսպէս - (600) կը նշանակուի դէ (6 × 100), - (7000) կը նշանակուի էռ (7 × 1000), , (300) կը նշանակուի դէ (3 × 100) եւն: Միաւորները բնականաբար ծածկագրութեան այս ձեւին չեն յարմարիր:

Փորութիւններ կը կոչեմ ծածկագրի այն տեսակը, ուր իւրաքանչէւր տառի փոխարէն կը գրուի տարբեր թուական գասի համապատասխան տառը: Այբուբենը կը բաժնուի չորս գասի, իւրաքանչէւրը 9 տառէ բաղկացած. Դուրութիւն (որոնց մէջ կը մտնեն - , բ, թ, տ, ե, ւ, է, ը, ն տառերը), բայունուրունէր (այն է ծ — լ), հորունուրունէր (այն է ծ — ջ) եւ հորունուրունէր (- - +): Փոխարինագրի մէջ միաւորի տեղ կը գրուի հազարաւոր, տասնաւորի տեղ հարիւրաւոր, հարիւրաւորի տեղ տասնաւոր եւ հազարաւորի տեղ միաւոր:

Հոս կը դնեմ ամբողջ ծածկագրի այլուրենը՝ իւրաքանչէւր տառի տակ դնելով իր արժեքը նօտրագիր:

w	r	t	q	b	g	k	l	թ	ժ
-	-	կ	ր	ց	-	կ	+	ն	
ի	լ	ի	ծ	կ	չ	ձ	զ	մ	
շ	յ	ւ	շ	ւ	դ	շ	շ	ւ	չ

։ Այս անունները հնարուած են առղերս գրողէն, բայի ներութիւն եւ Եղբայրութիւն բառերէն: Ուահանները այլուր կոչուած է փառաղանդները: որ տարբեր իմաստ ունենալով, հարի համարեցի այս անունով կոչել: